ԻԿՕ Մաշինների

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՈՎ

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2020թ.

ԵՐԵՎԱՆ 2021

Բովանդակություն

	էջ
Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

Baker Tilly Armenia CJSC
22 Hanrapetutyan Street
0010 Yerevan, Republic of Armenia
Tel: +374(10) 544-301
Tel: +374(10) 544-307/309
Fax: +374(10) 562-404
Email: info@bakertillyarmenia.com
www.bakertilly.am

12.04.2021թ.
N 032101

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն
Փ.Գևորգյան

Աուդիտորական ծառայությունների իրականացման
լիցենզիա թիվ ԱԾ-054՝ տրված ՀՀ ֆինանսների
և էկոնոմիկայի նախարարության կողմից

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԻԿՕ Մաշինների» ՍՊԸ -ի մասնակցին

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «ԻԿՕ Մաշինների» ՍՊԸ-ի (հետայսու՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ "Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար" բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի լուսաբանում

Ընկերության 2019թ. ֆինանսական հաշվետվությունները չեն ենթարկվել աուդիտի: Մեզ չի հանձնարարվել իրականացնել Ընկերության 2019թ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, այդ իսկ պատճառով մենք կարծիք կամ որևէ այլ հավաստում չենք արտահայտում Ընկերության 2019թ. ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մեր եզրակացությունը չի ներառում վերապահում՝ այս հարցի առնչությամբ:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-երի համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիսպատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Ընկերությունը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել այս ֆինանսկան հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք:

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը ակրող է էական կասկած առաջացնել Ընկերության անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, աուդիտորը չի կարող երաշխավորել, որ ապագա իրադարձությունները կամ հանգամանքները չեն կարող հանգեցնել նրան, որ Ընկերությունը կկորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

- Ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ Ընկերության ֆինանսական տեղեկատվության կամ գործունեության վերաբերյալ՝ ֆինանսական հաշվետվությունների մասին կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատվություն ենք կրում աուդիտորական աշխատանքների ուղղորդման, վերահսկման ու կատարման համար: Մենք լիովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորած շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Աուդիտոր
Մ. Պոնամարևա
12.04.2021թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
31 դեկտեմբերի 2020թ-ի դրությամբ

(հազար դրամ)

	Ծանոթագրություն	**2020թ.**	**2019թ.**
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	2,376,659	2,521,863
Ոչ նյութական ակտիվներ		329	499
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	5	92,428	81,188
Հետաձգված հարկային ակտիվներ	6	3,774	5,732
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**2,473,190**	**2,609,282**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	7	787,141	729,696
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	969,040	764,811
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	9	97,410	95,888
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**1,853,591**	**1,590,395**
Ընդամենը ակտիվներ		**4,326,781**	**4,199,677**
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	10	3,600	3,600
Կուտակված շահույթ		1,870,238	1,718,521
Ընդամենը սեփական կապիտալ		**1,873,838**	**1,722,121**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Բանկային վարկեր և փոխառություններ	11	286,984	507,327
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**286,984**	**507,327**
Ընթացիկ պարտավորություններ			
Բանկային վարկեր և փոխառություններ	11	839,389	330,476
Կրեդիտորական պարտքեր և ստացված կանխավճարներ	12	935,710	1,360,941
Կրեդիտորական պարտքեր՝ բյուջեին	13	60,141	153,541
Շահութահարկի գծով պարտավորություն		51,866	60,331
Այլ կրեդիտորական պարտքեր	14	278,853	64,940
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**2,165,959**	**1,970,229**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**4,326,781**	**4,199,677**

Գլխավոր տնօրեն՝
Հայկ Մարտիրոսյան
12.04.2021թ.

Գլխավոր հաշվապահ՝
Գայանե Բարսեղյան

1-26 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	Ծանոթագրություն	**2020թ.**	**2019թ.**
Հասույթ	15	4,368,940	4,266,573
Վաճառքի ինքնարժեք	16	(3,257,331)	(3,098,756)
Համախառն շահույթ		**1,111,609**	**1,167,817**
Իրացման ծախսեր	17	(210,143)	(158,890)
Վարչական ծախսեր	18	(200,750)	(245,561)
Գործառնական այլ ծախսեր	19	(781,320)	(373,051)
Գործառնական այլ եկամուտներ	20	775,377	293,384
Գործառնական շահույթ		**694,773**	**683,699**
Ֆինանսական ծախսեր	21	(69,096)	(81,481)
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից վնաս		(131,263)	(42,159)
Շահույթ մինչև հարկումը		**494,414**	**560,059**
Շահութահարկի զծով ծախս	22	(128,364)	(129,871)
Զուտ շահույթ		**366,050**	**430,188**
Այլ համապարփակ արդյունք			
Այլ համապարփակ արդյունք		-	-
Ընդամենը համապարփակ արդյունք		**366,050**	**430,188**

1-26 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ/(վնաս)	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	3,600	1,468,020	1,471,620
Ընդամենը համապարփակ եկամուտ			
Տարվա զուտ շահույթ	-	430,188	430,188
Նախորդ տարիների ճշտումներ		20,313	20,313
Ընդամենը համապարփակ եկամուտ	-	450,501	450,501
Կապիտալում ուղղակիորեն գրանցված գործարքներ բաժնետերերի հետ			
Հայտարարված շահաբաժիններ	-	(200,000)	(200,000)
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	-	(200,000)	(200,000)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	**3,600**	**1,718,521**	**1,722,121**
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	3,600	1,718,521	1,722,121
Ընդամենը համապարփակ եկամուտ			
Տարվա զուտ շահույթ	-	366,050	366,050
Ընդամենը համապարփակ եկամուտ	-	366,050	366,050
Կապիտալում ուղղակիորեն գրանցված գործարքներ բաժնետերերի հետ			
Հայտարարված շահաբաժիններ	-	(214,333)	(214,333)
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	-	(214,333)	(214,333)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**3,600**	**1,870,238**	**1,873,838**

1-26 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա զուտ շահույթ	366,050	430,188
Ճշգրտումներ		
Մաշվածության, ամորտիզացիայի ծախս	395,632	329,846
Հիմնական միջոցների օտարում	712,003	288,706
Փոխարժեքային տարբերությունից վնաս	131,263	42,159
Հաշվեգրված տոկոսներ	69,096	81,481
Շահութահարկի գծով ծախս	128,364	129,871
Այլ ճշտումներ	-	25,391
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր՝ մինչև շրջանառու կապիտալի փոփոխությունները	**1,802,408**	**1,327,642**
Փոփոխություններ՝		
Պաշարներում	(54,295)	(126,746)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերում	(892,216)	(359,139)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերում	(537,881)	306,417
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր նախքան շահութահարկի վճարումը	**318,016**	**1,148,174**
Վճարված շահութահարկ	(134,871)	(115,850)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**183,145**	**1,032,324**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և այլ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերում	(976,651)	(872,450)
Հիմնական միջոցների օտարումից մուտքեր	692,638	258,340
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(284,013)**	**(614,110)**
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկերի և փոխառությունների ստացում/(մարում), զուտ	172,866	(171,113)
Տոկոսների վճարում	(67,475)	(85,723)
Շահաբաժինների վճարում	-	(200,000)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**105,391**	**(456,836)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	4,523	(38,622)
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(3,001)	5,621
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	95,888	128,889
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ	**97,410**	**95,888**

1-26 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«ԻԿՕ Մաշինների» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) գրանցվել է 2012թ. հունվարի 23-ին Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի կողմից: Ընկերությունը մասնագիտացված է ճանապարհաշինարարական, հանքարդյունաբերական տեխնիկայի և ճանկավոր բեռնիչների վաճառքի և սպասարկման մեջ: 2013թ. ապրիլի 1-ից Ընկերությունը դարձել է «Կոմացու ԱՊՀ» ԲԲԸ-ի պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետությունում:
Ընկերության միակ մասնակիցն է «ԻԿՕ Խոլդինգ» ԳմբԽ-ն: Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Մասիսի նրբանցք 3, փոստային ինդեքս 0061: 2020թ. Ընկերության աշխատողների տարեկան միջին թիվը կազմել է 32 մարդ (2019թ.՝ 31 մարդ):

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա գեղչված արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ՝ այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունից պահանջվում է կատարել մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի ներկայացված գումարների վրա: Գնահատումները և վերջիններիս համար հիմք հանդիսացող ենթադրությունները հիմնված են պատմական փորձի և այլ տարբեր գործոնների վրա, որոնք ողջամիտ են համարվում՝ ելնելով այդ պահին առկա գիտելիքներից: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և վերջիններիս համար հիմք հանդիսացող ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում կատարվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Ընկերության կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

- «Ուղենշային տոկոսադրույքի բարեփոխում (փուլ 2)» (ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 16, ՖՀՄՍ 4 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)
- «Մուտքեր նախքան նախատեսված օգտագործումը» (ՀՀՄՍ 16 փոփոխություններ)
- «Հղումներ հայեցակարգային հիմունքներին» (ՖՀՄՍ 3 փոփոխություններ)
- «Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսեր» (ՀՀՄՍ 37 փոփոխություններ)
- 2018-2020թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ (ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16 փոփոխություններ):
- «Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ» (ՀՀՄՍ 1 փոփոխություններ):

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը. 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 522.59 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 641.11 ՀՀ դրամ, 1 ռուսական ռուբլին – 7.02 ՀՀ դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 479.70 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 537.26 ՀՀ դրամ, 1 ռուսական ռուբլին – 7.77 ՀՀ դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը), բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքը պետք է ճանաչվի որպես ակտիվ այն և միայն այն դեպքում, երբ՝

ա) հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի կազմակերպություն, և

բ) միավորի սկզբնական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Ընկերությունը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքում ճանաչում է փոխարինվող մասի ծախսումները, եթե այդ ծախսումները ավելացնում են հիմնական միջոցի ապագա տնտեսական օգուտները և բավարարում են ճանաչման չափանիշներին: Այդ փոխարինված մասերի հաշվեկշռային արժեքը ապաճանաչվում է: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Դասի անվանումը	Օգտական ծառայություն
Շենքեր և շինություններ	20 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	5 տարի
Տրանսպորտային միջոցներ	8 տարի
Համակարգչային տեխնիկա	1 տարի
Այլ հիմնական միջոցներ	8 տարի
Մինչև 50,000 դրամ արժողությամբ հիմնական միջոցներ	1 տարի

3.3 Ոչ նյութական ակտիվներ

ա) Սկզբնական ճանաչում

Ոչ նյութական ակտիվը ճանաչվում է այն դեպքում, երբ՝

- հավանական է, որ ակտիվին վերագրելի ապագա տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն,
- ակտիվը վերահսկվում է Ընկերության կողմից՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և
- ակտիվի արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

բ) Սկզբնական ճանաչմանը հաջորդող չափումներ

Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվը հաշվառվում է իր սկզբնական արժեքով (հաշվի առած հետագա ավելացվող ծախսումները) հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստը:

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Դասի անվանումը	Օգտական ծառայություն
Հաշվապահական հաշվառման ՀԾ ծրագիր	5 տարի
Առևտրի կառավարման 1 C 8.3 ծրագիր	5 տարի
Ձեռնարկություն 1 C 8.3 ծրագիր	5 տարի

3.4 Վարձակալված ակտիվներ

Համաձայն ՀՀՄՍ 17-ի՝ «Վարձակալություն», վարձակալված ակտիվի սեփականության իրավունքը փոխանցվում է վարձակալին, երբ նրան են փոխանցվում սեփականության իրավունքի հետ կապված բոլոր ռիսկերը և օգուտները: Վարձակալված ակտիվը վարձակալության սկզբում ճանաչվում է վարձակալված գույքի իրական արժեքով կամ, ավելի ցածր լինելու դեպքում, նվազագույն վարձավճարների ներկա արժեքով՝ գումարած միանվագ վճարները, եթե այդպիսիք կան: Համապատասխան գումարը ճանաչվում է որպես ֆինանսական վարձակալության գծով պարտավորություն, անկախ նրանից, որ վարձակալական վճարների մի մասը կարող է վճարման ենթակա լինել մինչև վարձակալության սկիզբը:
Վարձակալված ակտիվների հետագա հաշվառումը, այսինքն՝ մաշվածության մեթոդի ընտրությունը և օգտակար ծառայության ժամկետների որոշումը, համապատասխանում են սեփականության իրավունքով Ընկերությանը պատկանող նմանատիպ ակտիվների հաշվառմանը: Ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները նվազեցվում են վարձավճարների չափով՝ հանած ֆինանսական վճարը, որը ներառվում է ֆինանսական ծախսերում: Ֆինանսական վարձակալության տոկոսային մասն իրենից ներկայացնում է մնացորդային արժեքի հաստատուն մաս, որը վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ վարձակալության ժամկետի ընթացքում:
Մյուս բոլոր վարձակալությունները դիտվում են որպես գործառնական վարձակալություններ: Գործառնական վարձակալության գծով վճարները ճանաչվում են որպես ծախս գծային հիմունքով: Վարձակալության հետ կապված ծախսերը, ինչպիսիք են պահպանման և ապահովագրության ծախսերը, ծախսագրվում են իրականացման պահին:

ՖՀՄՍ 16 կիրառումը Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա էական ազդեցություն չի ունեցել:

3.5 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք ԱՄԱԵ մեթոդը և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.6 Ֆինանսական գործիքներ

ՖՀՄՍ 9-ը ներառում է ֆինանսական ակտիվների երեք հիմնական դաս՝ ամորտիզացված արժեքով չափվող, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող և շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: ՖՀՄՍ 9-ով նախատեսված ֆինանսական ակտիվների դասակարգումը որպես կանոն հիմնված է այն բիզնես մոդելի վրա, որի շրջանակներում կառավարվում է ֆինանսական ակտիվը, և դրամական միջոցների հոսքերի պայմանագրով նախատեսված այդ ակտիվին վերաբերող բնութագրերի վրա: ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ այլևս չեն գործում ՀՀՄՍ 39-ով սահմանված մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների, փոխառությունների և դեբիտորական պարտքերի և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների դասերը: ՖՀՄՍ 9-ը մեծամասամբ պահպանում է ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման համար գործող ՀՀՄՍ 39-ի պահանջները:

ՖՀՄՍ 9-ի կիրառումն էական ազդեցություն չի ունեցել ֆինանսական պարտավորություններին վերաբերող Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության վրա:

Ճանաչում և սկզբնական չափում

Առևտրական դեբիտորական պարտքերի սկզբնական ճանաչումը տեղի է ունենում դրանց առաջացման օրը: Մյուս բոլոր ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում, երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Ֆինանսական ակտիվի (եթե այն առևտրական դեբիտորական պարտք չէ, որը չի պարունակում էական ֆինանսավորման բաղկացուցիչ) կամ ֆինանսական պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով՝ գումարած, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող միավորի համար, գործիքի ձեռքբերմանը կամ թողարկմանն ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսումները: Էական ֆինանսավորման բաղադրիչ չպարունակող առևտրական դեբիտորական պարտքի սկզբնական չափումն իրականացվում է գործարքի գնով:

Դասակարգում և հետագա չափում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ պարտքային ներդրումների համար, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ բաժնային ներդրումների համար, կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Ընկերությունը փոխում է ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը, որի դեպքում բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց վրա ազդում է այդ փոփոխությունը, վերադասակարգվում են բիզնես մոդելի փոփոխությանը հաջորդող առաջին հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրը:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախատեսված չէ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական միջոցների հոսքեր հավաքագրելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ:

Առևտրական նպատակներով չպահվող բաժնային գործիքում ներդրման սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը կարող է անդառնալիորեն որոշել ներկայացնել ներդրման իրական արժեքի հետագա փոփոխություններն այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այս ընտրությունը կատարվում է առանձին՝ յուրաքանչյուր ներդրման համար:

Բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք դասակարգված չեն որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող, ինչպես ներկայացված է վերը, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Այս ակտիվները ներառում են բոլոր ածանցյալ ֆինանսական ակտիվները: Սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը կարող է անդառնալիորեն նախատեսել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափման պահանջները, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանա:

Ֆինանսական ակտիվների փոխանցումը երրորդ կողմերին այնպիսի գործարքներում, որոնք չեն բավարարում ապաճանաչման պայմաններին, չի դիտարկվում որպես վաճառք այս նպատակի համար, և Ընկերությունը շարունակում է ճանաչել ակտիվները:

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են առևտրական նպատակների համար կամ կառավարվում են և որոնց ստեղծած արդյունքը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով:

Ֆինանսական ակտիվներ – Գնահատում, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ կապված այլ հիմնական ռիսկերի և ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի), ինչպես նաև շահույթի մարժայի հատուցում:

Գնահատելիս, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, Ընկերությունը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այստեղ ներառվում է այն գնահատումը, թե արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական միջոցների ժամկետը կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չի բավարարի այդ պայմանը: Այս գնահատումն իրականացնելիս Ընկերությունը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական միջոցների գումարը կամ ժամկետները,
- վաղաժամկետ մարման և գործողության ժամկետի երկարաձգման պայմանները:

Վաղաժամկետ մարման պայմանը համապատասխանում է միայն մայր գումարի և տոկոսների վճարում հանդիսանալու չափանիշին, եթե վաղաժամկետ մարման գումարը, ըստ էության, իրենից ներկայացնում է մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների չվճարված գումարները, որոնք կարող են ներառել լրացուցիչ ողջամիտ հատուցում պայմանագրի վաղաժամկետ դադարեցման համար: Բացի այդ, պայմանագրի անվանական արժեքի զեղչով կամ հավելավճարով ձեռքբերված ֆինանսական ակտիվի համար վաղաժամկետ մարում թույլատրող կամ պահանջող պայմանն այն գումարի չափով, որն, ըստ էության, իրենից ներկայացնում է պայմանագրի անվանական արժեքը գումարած հաշվեգրված (սակայն չվճարված) պայմանագրային տոկոսները (կարող են ներառել լրացուցիչ ողջամիտ հատուցում պայմանագրի վաղաժամկետ դադարեցման համար), դիտարկվում է որպես նշված չափանիշին համապատասխանող, եթե վաղաժամկետ մարման պայմանի իրական արժեքն էական չէ սկզբնական ճամանաչման պահին:

Ֆինանսական ակտիվներ – Հետագա չափում, շահույթ և վնաս
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Այս ակտիվները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ամորտիզացված արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորստի չափով: Տոկոսային եկամուտը, փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը և վնասը և արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական պարտավորություններ – Դասակարգում, հետագա չափում, շահույթ և վնաս

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող: Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե այն դասվում է առևտրական նպատակներով պահվող գործիքների դասին, հանդիսանում է ածանցյալ գործիք կամ նախատեսված է որպես այդպիսին սկզբնական ճանաչման պահին: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները չափվում են իրական արժեքով, իսկ դրանց գծով զուտ շահույթը և վնասը, ներառյալ՝ տոկոսային ծախսը, ճանաչվում են շահույթում կամ վնասում: Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Տոկոսային ծախսը և փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը և վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Այդ ճանաչումից առաջացող ցանկացած շահույթը կամ վնասը նույնպես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների փոփոխություն

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոխվում են, Ընկերությունը գնահատում է, թե արդյոք փոփոխված ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի փոփոխություն»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ՝ իրական արժեքով:

Ընկերությունն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, թե արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբերվում են փոփոխված կամ փոխարինող ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերից: Ընկերությունը գնահատում է փոփոխության նշանակալի լինելը քանակական և որակական գործոնների հիման վրա հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Ընկերությունը կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Ընկերությունը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է ելնելով հետևյալ որակական գործոններից.

- ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխություն,
- գրավի կամ ապահովվածության այլ միջոցների փոփոխություն:

Եթե ամորտիզացված արժեքով հաշվառվող փոփոխված ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր չեն, փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը: Այս դեպքում Ընկերությունը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտումից առաջացող գումարը ճանաչում է որպես փոփոխության գծով շահույթ կամ վնաս՝ շահույթի կամ վնասի կազմում: Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը վերահաշվարկվում է որպես ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված, վերանայված կամ փոփոխված պայմանագրային դրամական միջոցների ներկա արժեք: Ծանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճշգրտում են փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում են փոփոխված ֆինանսական ակտիվի գործողության մնացած ժամկետի ընթացքում:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պայմաններով պարտավորության գծով դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Եթե փոփոխությունը (կամ փոխարինումը) չի հանգեցնում ֆինանսական պարտավորության ապաճանաչմանը, Ընկերությունը կիրառում է այն հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, համաձայն որի ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է, երբ փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման, այսինքն, Ընկերությունը ճանաչում է փոփոխության (կամ փոխարինման) արդյունքում առաջացող ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի ճշգրտումը շահույթում կամ վնասում փոփոխության (կամ փոխարինման) ամսաթվի դրությամբ:

Գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունների գծով դրամական միջոցների հոսքերի փոփոխությունները չեն համարվում փոփոխություն, եթե հանդիսանում են գործող պայմանագրային պայմանների արդյունք:

Ընկերությունն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Ընկերությունը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- գրավի կամ ապահովվածության այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման պայմանի ավելացում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմանների համաձայն դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ՝ վճարված վճարները (առանց ստացված վճարների)՝ զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, առնվազն 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության գծով մնացած դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքից: Եթե պարտքային գործիքների փոխարինումը կամ վերջիններիս պայմանների փոփոխությունը հաշվառվում է որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճանաչվում են որպես մարումից շահույթի կամ վնասի մաս: Եթե փոխարինումը կամ պայմանների փոփոխությունը չի հաշվառվում որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճշգրտում են պարտավորության հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում են փոփոխված պարտավորության գործողության մնացած ժամկետի ընթացքում:

Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում, Ընկերությունը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում վերահսկողությունը ֆինանսական ակտիվի նկատմամբ:

Ընկերությունն իրականացնում է գործարքներ, որոնց շրջանակներում փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված կամ բոլոր, կամ, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է: Ընկերությունը նաև ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորությունից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են, որի դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով:

Ֆինանսական պարտավորության ապաճանաչման ժամանակ մարված հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ՝ փոխանցված ոչ դրամային ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները հաշվանցվում են և ներկայացվում են զուտ գումարով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում միայն այն դեպքում, երբ Ընկերությունն ունի գումարները հաշվանցելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

3.7 Արժեզրկում

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զատ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվների արժեզրկում

ՖՀՄՍ 9-ը փոխարինում է ՀՀՄՍ 39-ով սահմանված՝«կրած վնասի» մոդելը «սպասվող պարտքային վնասի» մոդելով: Արժեզրկման նոր մոդելը կիրառելի է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների, պայմանագրային ակտիվների, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային գործիքներում ներդրումների, սակայն ոչ՝ բաժնային գործիքներում ներդրումների համար: ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ պարտքային վնասն ավելի շուտ է ճանաչվում, քան պահանջվում էր ՀՀՄՍ 39-ով:

Ընկերությունը ճանաչում է սպասվող պարտքային վնասի գծով պահուստ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների համար:

Ընկերությունը չափում է վնասի գծով պահուստը ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասին հավասար գումարի չափով, բացառությամբ հետևյալ գործիքների, որոնց համար վնասի գծով պահուստը չափվում է 12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնասին հավասար գումարի չափով.

(i) պարտքային արժեթղթեր, եթե որոշվել է, որ դրանք ունեն ցածր պարտքային ռիսկ հաշվետու ամսաթվի դրությամբ և
(ii) այլ պարտքային արժեթղթեր և բանկային հաշիվների մնացորդներ, որոնց գծով պարտքային ռիսկը (օրինակ, ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի ընթացքում պարտականությունների չկատարման ռիսկ) էականորեն չի աճել սկզբնական ճանաչման պահից:

Առևտրական դեբիտորական պարտքերի և պայմանագրային ակտիվների վնասի գծով պահուստը միշտ չափվում է ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասին հավասար գումարի չափով:

Երբ Ընկերությունը որոշում է, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի էական աճ սկզբնական ճանաչումից հետո և երբ գնահատում է սպասվող պարտքային վնասը, այն դիտարկում է ողջամիտ և հիմնավորված տեղեկատվությունը, որը տեղին է և հասանելի առանց անհարկի ծախսերի կամ ջանքերի: Գնահատումը ներառում է թե՛ քանակական և թե՛ որակական տվյալները, ինչպես նաև Ընկերության նախկին փորձի և պարտքի հիմնավորված գնահատման վրա հիմնված վերլուծությունը և ներառում է հեռանկարի վերաբերյալ տեղեկատվությունը:

Ընկերությունը ենթադրում է, որ տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի էական աճ, եթե այն ավելի քան 365 օր ժամկետանց է:

Ընկերությունը համարում է, որ ֆինանսական ակտիվի գծով պարտականությունները չեն կատարվել, եթե՝

(i) հավանական չէ, որ փոխառուն ամբողջությամբ կկատարի պարտքի հետ կապված իր պարտականությունները, եթե Ընկերությունը չձեռնարկի այնպիսի գործողություններ, ինչպիսին գրավի իրացումն է (վերջինիս առկայության դեպքում), կամ
(ii) ֆինանսական ակտիվն ավելի քան 365 օր ժամկետանց է:

Ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է այն սպասվող պարտքային վնասը, որն առաջանում է պարտավորությունների չկատարման բոլոր հնարավոր դեպքերի արդյունքում ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ամբողջ ժամկետի ընթացքում:

12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է սպասվող պարտքային վնասի այն մասը, որն առաջանում է պարտավորությունների չկատարման այն դեպքերի արդյունքում, որոնք հնարավոր են հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում (կամ ավելի կարճ ժամկետի ընթացքում, եթե գործիքի ակնկալվող գործողության ամբողջ ժամկետը պակաս է 12 ամսից):

Սպասվող պարտքային վնասի գնահատման ժամանակ դիտարկվող առավելագույն ժամկետն իրենից ներկայացնում է առավելագույն պայմանագրային ժամկետը, որի ընթացքում Ընկերությունը ենթարկվում է պարտքային ռիսկի:

Սպասվող պարտքային վնասի չափում

Սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացում է պարտքային վնասի հավանականությունից ելնելով կշռված պարտքային վնասի գնահատականը: Պարտքային վնասը չափվում է որպես բոլոր պակասող դրամական միջոցների ներկա արժեք (այսինքն՝ որպես տարբերություն այն դրամական միջոցների հոսքերի միջև, որոնք Ընկերությունը պետք է ստանա պայմանագրի համաձայն, և որոնք ակնկալում է ստանալ):

Արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային արժեթղթերն արժեզրկված լինելու տեսանկյունից: Ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, եթե տեղի են ունեցել մեկ կամ ավելի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվի գծով գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի արժեզրկված լինելու վկայությունը ներառում է հետևյալ դիտարկելի տվյալները.
- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, այդ թվում՝ պարտականությունների չկատարումը կամ վճարման ավելի քան 180 օր ուշացումը,

- Ընկերության կողմից փոխառության կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը Ընկերությունն այլ պայմաններում չէր դիտարկի,
- փոխառուի հավանական սնանկացումը կամ այլ ֆինանսական վերակազմավորումը կամ
- արժեթղթի համար գործող շուկայի վերացումը ֆինանսական դժվարությունների պատճառով:

Սպասվող պարտքային վնասի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների վնասի գծով պահուստը նվազեցվում է այդ ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից:

Դուրսգրում

Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում, եթե Ընկերությունը չունի ողջամիտ հիմքեր ակնկալելու ֆինանսական ակտիվի ամբողջական կամ մասնակի փոխհատուցումը: Ընկերությունը չի ակնկալում դուրս գրված գումարների էական փոխհատուցում: Այնուամենայնիվ, դուրս գրված ֆինանսական ակտիվները կարող են դեռևս հանդիսանալ կատարողական գործողությունների առարկա՝ հասանելիք գումարների փոխհատուցման հետ կապված Ընկերության ընթացակարգերի հետ համապատասխանությունն ապահովելու համար:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ընկերությունն այս ակտիվները դիտարկում է արժեզրկման վկայության առանձին և հավաքական հիմունքներով: Բոլոր առանձին վերցված նշանակալի ակտիվները գնահատվում է արժեզրկման տեսանկյունից՝ առանձին հիմունքով: Արժեզրկման առանձին վկայություն չհայտնաբերելու դեպքում, այս ակտիվները գնահատվում է հավաքական հիմունքով՝ տեղի ունեցած, սակայն չբացահայտված արժեզրկման վկայություն հայտնաբերելու նպատակով:

Ակտիվները, որոնք առանձին վերցված նշանակալի չեն, գնահատվում են արժեզրկման տեսանկյունից հավաքական հիմունքով՝ խմբավորելով ռիսկի համանման բնութագրերով ակտիվները:

Հավաքական արժեզրկումը գնահատելիս Ընկերությունը դիտարկում է փոխհատուցման ժամկետների և կրած վնասի գումարի նախորդ ժամանակաշրջանների տեղեկատվությունը և կատարում է ճշգրտում, եթե ընթացիկ տնտեսական և վարկավորման պայմանները թույլ են տալիս, որպեսզի փաստացի վնասն ավել կամ պակաս լիներ նախկինում առկա միտումներով առաջարկվողներից:

Արժեզրկումից կորուստը հաշվարկվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն: Կորստի գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ պահուստային հաշվում: Եթե Ընկերությունը գտնում է, որ չկա ակտիվը փոխհատուցելու իրատեսական հնարավորություն, համապատասխան գումարները դուրս են գրվում: Եթե հետագայում տեղի ունեցած դեպքը հանգեցնում է արժեզրկումից կորստի գումարի նվազեցմանը և այդ նվազեցումը կարելի է անկողմնակալորեն վերագրել արժեզրկման ճանաչումից հետո տեղի ունեցած դեպքին, ապա արժեզրկումից կորստի գումարի նվազեցումը հակադարձվում է շահույթի կամ վնասի միջոցով:

3.8 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.9 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու՝ կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Ընկերությունը մտադիր է զուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

3.10 Հասույթի ճանաչում

Ապրանքի վաճառք

Ապրանքի վաճառքը ճանաչվում է ապրանքի սեփականության հետ կապված էական ռիսկերը և սեփականությունից ստացվող օգուտները հաճախորդին փոխանցելուց հետո, ինչը սովորաբար տեղի է ունենում, երբ Ընկերությունը վաճառում կամ առաքում է ապրանքը հաճախորդին, հաճախորդն ընդունում է ապրանքը, և համապատասխան դեբիտորական պարտքի հավաքագրելիությունը հիմնավորված է:

Ծառայությունների մատուցում

Ծառայությունների վաճառքը ճանաչվում է այն հաշվետու ժամանակաշրջանում, որում ավարտվել է ծառայությունների մատուցումը ըստ առանձին գործարքի, ինչը գնահատվում է որպես փաստացի մատուցված ծառայության և մատուցվող ամբողջ ծառայության հարաբերակցություն:

4 Հիմնական միջոցներ

(հազար դրամ)

	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ	Այլ հիմնական միջոցներ	Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	1,547,502	53,757	145,623	739,017	416,601	2,902,500
Ավելացումներ	84,654	12,209	13,080	358,506	394,277	862,726
Վերադասակարգում	(12)	19,003	-	-	(19,003)	(12)
Օտարում/Դուսգրում	(420,404)	(13,739)	(3,063)	(96,865)	-	(534,071)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,211,740	71,230	155,640	1,000,658	791,875	3,231,143
Ավելացումներ	910,254	-	492	37,037	12,417	960,200
Վերադասակարգում	-	-	(3,150)	-	-	(3,150)
Օտարում/Դուսգրում	(384,715)	-	(3,440)	(493,182)	-	(881,337)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,737,279	71,230	149,542	544,513	804,292	3,306,856
Մաշվածություն						
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	429,589	44,819	90,515	46,430	18,330	629,683
Տարեկան մաշվածություն	163,545	11,918	10,451	113,913	25,135	324,962
Օտարում/Դուսգրում	(214,625)	(13,739)	(1,301)	(15,700)	-	(245,365)
Վերադասակարգում	-	8,192	-	-	(8,192)	-
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	378,509	51,190	99,665	144,643	35,273	709,280
Տարեկան մաշվածություն	215,897	15,514	11,260	79,866	67,714	390,251
Օտարում/Դուսգրում	(70,289)	-	(3,440)	(95,605)	-	(169,334)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	524,117	66,704	107,485	128,904	102,987	930,197
Զուտ հաշվեկշռային արժեք						
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**833,231**	**20,040**	**55,975**	**856,015**	**756,602**	**2,521,863**
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,213,162**	**4,526**	**42,057**	**415,609**	**701,305**	**2,376,659**

5 Այլ ոչ ընթացիկ ակտիվներ

(հազար դրամ)

	Վարձակալված հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ ծախսեր	Ընդամենը
Սկզբնական արժեք		
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	90,708	90,708
Ավելացումներ	9,724	9,724
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	100,432	100,432
Ավելացումներ	16,451	16,451
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	116,883	116,883
Մաշվածություն		
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	14,814	14,814
Տարեկան մաշվածություն	4,430	4,430
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	19,244	19,244
Տարեկան մաշվածություն	5,211	5,211
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	24,455	24,455
Զուտ հաշվեկշռային արժեք		
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**81,188**	**81,188**
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**92,428**	**92,428**

6 Հետաձգված հարկային ակտիվներ

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Տարեսկզբի մնացորդ	5,732	5,560
Ֆինանսական արդյունքներում ճանաչված (ծախս)/փոխհատուցում (տե՛ս Ծանոթագրություն 22)	(1,958)	172
Տարեվերջի մնացորդ	**3,774**	**5,732**

2020թ. հետաձգված հարկի գծով կիրառելի դրույքաչափը կազմում է 18% (2019թ.՝ 18%):

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների շարժ.

(հազար դրամ)

	2019	Ֆինանսական արդյունքով ճանաչում	2020
Արձակուրդայինի պահուստ	5,732	(1,958)	3,774
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	**5,732**	**(1,958)**	**3,774**
Զուտ հետաձգված հարկային պարտավորություն	**5,732**	**(1,958)**	**3,774**

(հազար դրամ)

	2018	Ֆինանսական արդյունքով ճանաչում	2019
Արձակուրդայինի պահուստ	5,560	172	5,732
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	**5,560**	**172**	**5,732**
Զուտ հետաձգված հարկային պարտավորություն	**5,560**	**172**	**5,732**

7 Պաշարներ

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Պահեստամասեր	697,852	577,460
Վաճառքի համար պահվող տեխնիկա	84,419	147,743
Այլ նյութեր	4,870	4,493
	787,141	**729,696**

8 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	863,797	638,952
Տրված ընթացիկ կանխավճարներ	29,549	34,981
Դեբիտորական պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով	75,113	90,545
Այլ ընթացիկ ակտիվներ	581	333
	969,040	**764,811**

Դեբիտորական պարտքերի իրական արժեքները հավասար են դրանց հաշվեկշռային արժեքներին:
Տե՛ս ծանոթագրություն 23՝ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժույթի բացահայտման համար:

9 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Անկանխիկ դրամական միջոցներ հայկական դրամով	4,746	72,282
Անկանխիկ դրամական միջոցներ արտարժույթով	92,664	23,606
	97,410	**95,888**

10 Կանոնադրական կապիտալ

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 3,600 հազար դրամ, որը բաղկացած է մեկ բաժնեմասից (2019թ.՝ կանոնադրական կապիտալը կազմում է 3,600 հազար դրամ, որը բաղկացած է մեկ բաժնեմասից):

Ընկերության միակ մասնակիցն է «ԻԿՕ Խոլդինգ» ԳմբԽ-ն, կազմակերությունը գրանցված է Ավստրիայի հանրապետությունում:

11 Բանկային վարկեր և փոխառություններ

(հազար դրամ)

Ոչ ընթացիկ	2020թ.	2019թ.
Ֆինանսական վարձակալություն	210,221	507,327
Երկարաժամկետ վարկեր	76,763	-
	286,984	**507,327**
Ընթացիկ		
Կարճաժամկետ վարկեր	610,427	330,476
Ֆինանսական վարձակալության կարճաժամկետ մաս	197,420	-
Կարճաժամկետ փոխառություններ	31,542	-
	839,389	**330,476**
Ընդամենը վարկեր և փոխառություններ	**1,126,373**	**837,803**

Վարկերի պայմաններն ու ժամկետները ներկայացված են ստորև.

(հազար դրամ)

	Արժույթ	Մարման տարի	Անվանական տոկոսադրույք	2020թ.	2019թ.
Գրավով ապահովված բանկային վարկ (լիզինգ)	Եվրո	04/11/22	5.00%	381,075	434,312
Գրավով ապահովված բանկային վարկ (լիզինգ)	Եվրո	06/02/20	7.50%	-	9,060
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	14/09/26	8.50%	26,605	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	16/10/23	7.50%	235,987	439
Գրավով ապահովված բանկային վարկ (լիզինգ)	ԱՄՆ դոլար	14/07/22	8.00%	8,489	11,501
Գրավով ապահովված բանկային վարկ *	ՀՀ դրամ	27/05/22	12.00%	220,000	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	15/06/21	7.50%	22,340	38,736
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	15/06/21	7.50%	32,688	56,677
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	15/07/21	7.50%	36,010	67,997
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	15/07/21	7.50%	22,038	41,614
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	15/09/21	7.50%	45,426	77,218
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	13/03/23	7.50%	23,058	-
Գրավով ապահովված բանկային վարկ	ԱՄՆ դոլար	15/06/21	7.50%	23,038	38,736
Գրավով ապահովված բանկային վարկ (լիզինգ)	ՀՀ դրամ	04/04/22	11.00%	3,540	5,745
Գրավով ապահովված բանկային վարկ(լիզինգ)	ԱՄՆ դոլար	01/01/21	9.00%	-	4,473
Գրավով ապահովված բանկային վարկ (լիզինգ)	ԱՄՆ դոլար	15/02/23	8.00%	9,697	-
Գրավով ապահովված բանկային վարկ (լիզինգ)	ԱՄՆ դոլար	30/12/20	12.00%	-	44,550
Գրավով ապահովված բանկային վարկ (լիզինգ)	ԱՄՆ դոլար	04/07/22	11.00%	4,839	6,745
Չապահովված փոխառություն կապակցված կողմից (տես՝ Ծանոթագրություն 26)	ԱՄՆ դոլար	30/06/21	5.00%	31,543	-
				1,126,373	**837,803**

** Տոկոսը սուբսիդավորվում է պետության կողմից:*

12 Կրեդիտորական պարտքեր և ստացված կանխավճարներ

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Կրեդիտորական պարտքեր ձեռքբերումների գծով	917,939	1,242,696
Ստացված կանխավճարներ	52	96,851
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	17,719	21,394
	935,710	**1,360,941**

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություն, որն ապահովում է բոլոր պարտավորությունների ժամանակին կատարումը: Տե՛ս ծանոթագրություն 23՝ կրեդիտորական պարտքերի արժույթի բացահայտման համար:

13 Կրեդիտորական պարտքեր բյուջեին

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Եկամտահարկի գծով	15,293	22,976
Սոցիալական ապահովագրության գծով	1,237	297
Ավելացված արժեքի հարկի գծով	34,988	51,458
Ակցիզային հարկի գծով	6,687	76,172
Այլ պարտադիր վճարների գծով	1,936	2,638
	60,141	**153,541**

14 Այլ կրեդիտորական պարտքեր

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Պարտքեր շահաբաժինների գծով	214,333	-
Պարտքեր տույժերի, տուգանքների գծով	43,553	36,279
Ընթացիկ պահուստներ	20,967	28,661
	278,853	**64,940**

15 Հասույթ

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Ապրանքների վաճառքից	2,848,583	2,464,695
Ծառայությունների մատուցումից աշխատանքների կատարումից	1,380,700	1,801,878
Արտադրանքի վաճառքից	139,657	-
	4,368,940	**4,266,573**

16 Վաճառքի ինքնարժեք

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Վաճառված ապրանքների ինքնարժեք	2,324,371	2,078,805
Մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ինքնարժեք	836,869	1,019,951
Արտադրանքի ինքնարժեք	96,091	-
	3,257,331	**3,098,756**

17 Իրացման ծախսեր

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Աշխատավարձ	177,027	123,966
Մարքետինգի և գովազդի ծախսեր	4,620	139
Տրանսպորտային ծախսեր	9,050	3,859
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	1,482	9,390
Հիմնական միջոցների մաշվածություն	1,996	580
Իրացման այլ ծախսեր	15,968	20,956
	210,143	**158,890**

18 Վարչական ծախսեր

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Աշխատավարձ	131,619	137,404
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	7,235	6,226
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	6,301	7,740
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	6,215	29,214
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	20,426	19,155
Իրավաբանական և խորհրդատվական ծախսեր	2,752	383
Բանկային ծառայությունների ծախսեր ապահովագրության ծախսեր	4,353	3,810
Հիմնական միջոցների մաշվածություն	3,423	26,126
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	170	454
Վարչական այլ ծախսեր	18,256	15,049
	200,750	**245,561**

19 Գործառնական այլ ծախսեր

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Այլ գույքի օտարումից ծախսեր	712,003	288,706
Տույժեր տուգանքներ	34,144	72,054
Արտարժույթի փոխարկումից ծախսեր	28,107	10,709
Գործառնական այլ ծախսեր	7,066	1,582
	781,320	**373,051**

20 Գործառնական այլ եկամուտներ

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Այլ գույքի օտարումից եկամուտներ	692,638	258,340
Մաքսատուրքի վերահաշվարկից եկամուտ	26,274	-
Բոնուսներ	14,124	18,607
Պետության կողմից տոկոսադրույքի սուբսիդավորումից	12,506	-
Ապահովագրական փոխհատուցում	6,846	2,523
COVID 2019 փոխհատուցում	6,150	-
Այլ եկամուտներ	16,839	13,914
	775,377	**293,384**

21 Ֆինանսական ծախսեր

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Վարկերի և փոխառությունների գծով տոկոսային ծախսեր	42,328	60,857
Ֆինանսական վարձակալության գծով ծախսեր	26,768	20,624
	69,096	**81,481**

22 Շահութահարկի գծով ծախս

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Ընթացիկ հարկ	126,406	130,043
Հետաձգված հարկ (տես՝ Ծանոթագրություն 6)	1,958	(172)
	128,364	**129,871**

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը՝

(հազար դրամ)	2020 31 դեկտեմբերի ավարտված տարի	Արդյունավետ դրույքաչափ (%)	2019 31 դեկտեմբերի ավարտված տարի	Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ)	494,414		560,059	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2019թ.՝ 20%)	88,995	18	112,012	20
Արտարժույթի (դրական)/բացասական փոխարժեքային տարբերություն	23,627	4.8	8,432	1.5
Չնվազեցվող ծախսեր, զուտ	15,742	3.2	9,427	1.7
Շահութահարկի գծով ծախս	**128,364**	**26.0**	**129,871**	**23.0**

23 Ֆինանսական գործիքներ

Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության և բաժնային գործիքի յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.6-ում:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	893,346	673,933
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	97,410	95,888
	990,756	**769,821**

Ֆինանսական պարտավորություններ

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Բանկային վարկեր և փոխառություններ	1,126,373	837,803
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,175,877	1,375,826
Փոխհատուցումներ աշխատակիցներին	38,686	50,055
	2,340,936	**2,263,684**

Ֆինանսական ռիսկերի գործոններ

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Ընկերությունը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- Պարտքային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ
- Շուկայական ռիսկ

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Ընկերության ռիսկերի կառավարման համակարգի մշակման և վերահսկողության համար:

Ընկերության ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են շուկայական պայմանների ու Ընկերության գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով: Դասընթացների, կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով Ընկերությունը նպատակ ունի ձևավորել վերահսկման կանոնակարգված ու կառուցողական միջավայր, որտեղ բոլոր աշխատակիցները հստակ պատկերացում կունենան իրենց դերերի և պարտականությունների մասին:

1) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Այս ռիսկի ազդեցությունը Ընկերության համար առաջանում է ֆինանսական գործիքներից, ինչպիսիք են դեբիտորական պարտքերը, բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները և տրված փոխառությունները: Ղեկավարությունը հետևողական է, որ ապրանքները վաճառվեն և ծառայությունները մատուցվեն համապատասխան վարկային պատմություն ունեցող հաճախորդներին և շարունակաբար հետևում է դեբիտորական պարտքերի պորտֆելի շարժին: Դրամական միջոցները և դրանց համարժեքները պահվում են բարձր վարկանիշ ունեցող բանկերում: Փոխառությունները տրամադրվում են միայն կապակցված կողմերին:

Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	893,346	673,933
Ընթացիկ բանկային հաշիվներ	97,410	95,888
	990,756	**769,821**

2) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը պայմանավորված է այնպիսի դրսևորմամբ, որ Ընկերությունը կարող է հանդիպել դժվարությունների ֆինանսական գործիքների հետ կապված պարտավորությունները մարելու համար միջոցներ հայթայթելիս: Այն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Ընկերության մոտեցումն է հնարավորինս ապահովել բավարար իրացվելիություն բնականոն և արտակարգ իրավիճակներում պարտավորությունները կատարելու համար: Ընկերությունն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես դրամական միջոցները և դեբիտորական պարտքերը:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնությունը հաշվետու ամսաթվի դրությամբ: Աղյուսակներում ներկայացված են համախառն և չզեղչված գումարները, որոնք ներառում են գնահատված տոկոսների վճարումները:

(հազար դրամ)

2020	Հաշվեկշռային արժեք	Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր	Մինչև 3 ամիս	3-12 ամիս	1-5 տարի
Վարկեր և փոխառություններ	1,126,373	1,218,796	210,175	642,464	366,157
Կրեդիտորական պարտքեր և ստացված կանխավճարներ	1,274,704	1,274,703	77,860	1,196,843	-
Շահութահարկի գծով պարտավորություն	51,866	51,866	-	51,866	-
	2,452,943	**2,545,365**	**288,035**	**1,891,174**	**366,157**

2019	Հաշվեկշռային արժեք	Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր	Մինչև 3 ամիս	3-12 ամիս	1-5 տարի
Վարկեր և փոխառություններ	837,803	1,010,759	136,512	272,037	602,210
Կրեդիտորական պարտքեր և ստացված կանխավճարներ	1,579,422	1,579,422	174,935	1,404,487	-
Շահութահարկի գծով պարտավորություն	60,331	60,331	-	60,331	-
	2,477,556	**2,650,512**	**311,447**	**1,736,855**	**602,210**

3) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Ընկերության եկամուտների կամ վերջինիս ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում՝ արտարժույթի փոխարժեքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության ատիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Արտարժույթի ռիսկ

Ընկերությունը ենթարկվում է արտարժույթի ռիսկին այնքանով, որքանով չեն համապատասխանում միմյանց Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և այն արժույթները, որոնցով արտահայտված են Ընկերության գործառնությունները, ակտիվներն ու պարտավորությունները: Արտաժույթի ռիսկը հիմնականում առաջանում է Ընկերության արտերկրյա վաճառքներից և ձեռքբերումներից որոնք հիմնականում արտահայտված են ԱՄՆ դոլարով, Եվրոյով և ռուսական Ռուբլով:

Ստորև ներկայացված է արտարժույթի ռիսկին Ընկերության ենթարկվածությունը:

2020

(հազար դրամ)

	ԱՄՆ դոլար	ԵՎՐՈ	Ռուբլի
Ֆինանսական ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	14,541	201	25,857
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	-	92,664
	14,541	**201**	**118,521**

Ֆինանսական պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	521,061	381,075	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	231,548	224,573	349,441
	752,609	**605,648**	**349,441**
Զուտ ենթարկվածություն	**(738,068)**	**(605,447)**	**(230,920)**

2019 *(հազար դրամ)*

	ԱՄՆ դոլար	ԵՎՐՈ	Ռուբլի
Ֆինանսական ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	19,723	9,396	2,311
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,055	-	22,551
	20,778	**9,396**	**24,862**
Ֆինանսական պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	388,686	443,372	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	608,998	8,508	560,036
	997,684	**451,880**	**560,036**
Զուտ ենթարկվածություն	**(976,906)**	**(442,484)**	**(535,174)**

Զգայունության վերլուծություն

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի 10% արժևորումը (արժեզրկումը) ԱՄՆ դոլարի, Եվրոյի և ռուսական Ռուբլու նկատմամբ կազդեր արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների չափման և շահույթի կամ վնասի վրա ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունն իրականացնելիս ենթադրվում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ և հաշվի չի առնվում կանխատեսվող վաճառքների և գնումների ազդեցությունը:

10% արժևորում

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն		Ռուբլու ազդեցություն	
	2020թ.	**2019թ.**	**2020թ.**	**2019թ.**	**2020թ.**	**2019թ.**
Շահույթ	73,807	97,691	60,545	44,248	23,092	53,517

10% արժեզրկում

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն		Ռուբլու ազդեցություն	
	2020թ.	**2019թ.**	**2020թ.**	**2019թ.**	**2020թ.**	**2019թ.**
Վնաս	(73,807)	(97,691)	(60,545)	(44,248)	23,092)	(53,517)

Կապիտալի կառավարում

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը՝ առավելագույնին հասցնելով բաժնետերերի եկամուտները՝ փոխառու և կապիտալ միջոցների օպտիմալ համապատասխանություն ապահովելու միջոցով:

Ընկերության ղեկավարությունը պարբերաբար վերանայում է կապիտալի կառուցվածքը, որպեսզի ապահովի փոխառու միջոցների և սեփական կապիտալի մնացորդների առավելագույն օպտիմալ համապատասխանություն:

24 Իրական արժեք

Ղեկավարությունը գտնում է, որ Ընկերության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են վերջիններիս հաշվեկշռային արժեքներին:

25 Պայմանական դեպքեր

Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով:
Բոլոր այս գործոնները կարող են բացասաբար ազդել Ընկերության ապագա ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վրա: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա տարակուսանքներն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Ընկերության ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա:

Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ համապատասխան քայլեր է ձեռնարկում գոյություն ունեցող պայմաններում Ընկերության կայունությունն ապահովելու նպատակով:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Չնայած Ընկերության հիմնական միջոցները հիմնականում ապահովագրված են բայց Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր բոլոր ակտիվների համար, ուստի գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

26 Փոխկապակցված անձանց հետ կատարված գործարքներ

Փոխկապակցված կողմերում ներառվում են նրա միակ մասնակիցը, IKO խմբի կազմակերպությունները և հիմնական ղեկավար անձնակազմը:

Գործարքներ առանցքային ղեկավար անձնակազմի հետ

	2020թ.	(հազար դրամ) 2019թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ	184,062	187,017

Գործարքներ մասնակցի հետ

Գործարքներ	2020թ.	(հազար դրամ) 2019թ.
Պահեստամասերի ձեռքբերում	198,472	71,299
Հիմնական միջոցների ձեռքբերում	105,769	-
Շահաբաժինների հայտարարում	214,333	200,000
Փոխառության ստացում	29,756	-
Տոկոսների հաշվեգրում	265	-

Մնացորդներ	2020թ.	(հազար դրամ) 2019թ.
Կրեդիտորական պարտքեր	223,997	-
Շահաբաժիններ	214,333	-
Փոխառության և տոկոսի մնացորդ	31,543	-

Գործարքներ IKO խմբի կազմակերպությունների հետ

Գործարքներ	2020թ.	(հազար դրամ) 2019թ.
Պահեստամասերի ձեռքբերում	-	9,568
Տոկոսների հաշվեգրում	154,376	20,527